ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 56

« 24 » դեկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Բերքաշատ համայնքի 2020թ. բյուջեում կատարված փոփոխությունները հաստատված ավագանու 22.12.2020թ. թիվ 12-Ն որոշմամբ:

Առդիր 47 թերթ:

Բերքաշատ գյուղական համայնքի
ղեկավար՝ Հ. Չվչյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 25136-2020
25 12 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բերքաշատ համայնք,
harut1956@mail.ru

«22» դեկտեմբերի 2020 թվականի N 12-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 04-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության 21.12.2020թ. N 06/27.2/28725-2020 փորձագիտական եզրակացությունը Բերքաշատ համայնքի ավագանու 2019 թ. դեկտեմբերի 26-ի «Բերքաշատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 04-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) Եկամտային մասը փոփոխել հետևյալ կերպ՝

Հողի հարկը պակասեցնել՝ 200.000 (երկու հարյուր) հազար դրամով,
Տեղական վճարները պակասեցնել՝ 400.000 (չորս հարյուր) հազար դրամով,
Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները ավելացնել՝ 270.000 (երկու հարյուր յոթանասուն) հազար դրամով:

2) Ծախսային մասը փոփոխել հետևյալ կերպ՝

01-1-1 նախահաշվի
4111 հոդվածը պակասեցնել՝ 360.000 (երեք հարյուր վաթսուն հազար) դրամով,
4214 հոդվածը ավելացնել 30.000 (երեսուն հազար) դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ավագանու անդամներ՝ *կողմ ( )* *Դեմ ( )* *Ձեռնպահ ( )*

Տ. Չվչյան
Մ. Բաղոյան
Ս. Գևորգյան
Ա. Աբգարյան
Ռ.ՔԵՓԻԿՅԱՆ

Համայնքի ղեկավար՝ *Չվչյան Հ.*

2020 թվականի դեկտեմբերի **22**
գ. Բերքաշատ
ժամը 12[55]

Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 04-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Ներկայացված Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 04-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

Այս առումով նախևառաջ անդրադառնալով ներկայացված Նախագծի հիմնավորմանը, հարկ ենք համարում նշել, որ՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորման բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն ունեն առանցքային նշանակություն, հետևաբար նորմատիվ իրավական ակտի Նախագծի հիմնավորման մեջ պարտադիր պետք է ներառել իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը, խնդիրները, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը, կարգավորման նպատակը, բնույթը և ակնկալվող արդյունքները:

Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի հիմնավորումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ

մասով սահմանված պահանջներին՝ անհրաժեշտ է այն համապատասխանեցնել օրենքով՝ նորմատիվ իրավական ակտի հիմնավորման կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին:

Միևնույն ժամանակ, Նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Նախագծի վերնագրում անհրաժեշտ է նշել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը:

Միևնույն ժամանակ, Նախագծի վերնագրում «Բերքաշատ համայնքի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «ավագանու» բառը:

2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջները և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին կետով նախատեսվում է կատարել մեկից ավելի փոփոխություն՝ Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների բովանդակությանը:

3. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:

4. Նախագծի նախաբանում որպես ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման լիազորող նորմ նշված է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածը:

Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածը վերաբերվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննությանը և ժամկետներին՝ Նախագծի նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածին արված հղումն անհրաժեշտ է հանել:

5. Նախագծի 1-ին կետում «Բերքաշատ համայնքի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի ավագանու» բառերով:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավակարգավորման համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Տվյալ պարագայում հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է վերանայել Նախագծի 1-ին կետով ամրագրված կարգավորումները՝ դրանք համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին:

6. Նախագծի 2-րդ կետում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթները:

**Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝**

Արդարադատության
Նախարարություն

12/21/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՄՓՈՓՈԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի ավագանու « 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 04-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի փորձագիտական եզրակացության

N	ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՏԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱ
1	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները նախագծի վերնագրում անհրաժեշտ է նշել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը: Նախագծի վերնագրում «Բերքաշատ համայնքի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «ավագանու» բառը	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1 -րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներ կատարվել է համապատասխան ուղղում:
2	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Նախագծի վերնագիրը անհրաժեշտ համապատասխանեցնել Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների բովանդակությանը:	Հիմք ընդունելով «Նորմատ իրավական ակտերի մասին» 12-հոդվածի 1-ին մասի պահանջնե կատարվել է համապատասխ ուղղում:
3	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Նախագծի նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:	Հիմք ընդունելով «Նորմատ իրավական ակտերի մասին» 18-հոդվածի 3-րդ մասի պահանջնե կատարվել է համապատասխ ուղղում:
4	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Նախագծի նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածին արված հղումն անհրաժեշտ է հանել:	կատարվել է համապատասխան ուղղում:
5	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Նախագծի 1-ին կետում «Բերքաշատ համայնքի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքի ավագանու»	կատարվել է համապատասխան ուղղում:
6	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Նախագծի 2-րդ կետում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:	Հիմք ընդունելով «Նորմա իրավական ակտերի մաս Հայաստանի Հանրապետության օրե 23-րդ հոդվածի դրույթները կատա է համապատասխան ուղղում:

Բերքաշատ համայնքի ղեկավար՝ ..... *Հ. Չիլյան*